0 1 OCT 2010

ՀԽՍՀ ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏ — ՀՍՍՀ ՍՏԻԿԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ԿԱՐՏՈՖԻԼԻ ԵՎ ՇԱՔԱՐԻ ՃԱԿՆԴԵՂԻ ՄՇԱԿՄԱՆ ԱԳՐՈԿԱՆՈՆՆԵՐ

(Հաստատված ՀԽՍՀ Հողժողկոմ
Վ. Մամիկոնյանի կողմից)

635
4-36

ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1935

20717

20 MAY 2013

Խմբագիր՝ Ս. Խաչատրյան. Վոճաբան՝ Արր. Գրիգորյան
Գ. Խմբագիր՝ Գ. Սարոյան. Սրբագրիչ՝ Ի. Տ. Մավսիսյան

Թույլատրված է. Գլավլիտի լիազոր № 630
Հանձնված է արտադրության 1934 թ. դեկտեմբերի 25-ին
Տարադրված է տպագրելու 1935 թ. հունվարի 1-ին

Հրատ. № 159 Տիրաժ 2000 Գտավոր № 745

Ցերևան. Գյուղհրատի տպարան, Նալբանդյան 50

ԿԱՐՏՈՖԻԼԻ ՄՇԱԿՄԱՆ ԱԳՐՈԿԱՆՈՆՆԵՐ

635
4-36 մ.

1002
33033

33955

4146

1. ՀՈՂԱՄԱՍԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ.

1. Կարտոֆիլը պետք է մշակել ավազախառն թեթև, բերրի և պարարտ հողերում։

2. Այն տեղերում, որտեղ կարտոֆիլը մտնում է ցանքաշրջանառության մեջ, անհրաժեշտ է կարտոֆիլին հատկացնել միամյա (վիկա, քուրուշնա, շամբալա), բազմամյա՝ (առվույտ, կորնգան, յերեքնուկ), խոտաբույսերից, ընդեղեններից (լոբի, սիսեռ, վոսպ) և պարարտացրած հացաբույսերից ազատված հողամասեր։

3. Կարտոֆիլի ցանքը կատարել մասսիվ հողակտորներով։

4. Այն հողամասերը, որտեղ ցանված կարտոֆիլը 1934 թ. վարակված է յեղել ատաղաձև —փոշիացող քոս (парош. парша) հիվանդությամբ՝ 3—5 տարի տևողությամբ կարտոֆիլ չմշակել, ոգտագործել այդ հողերն այլ կուլտուրաների համար։

Հանրապետական գրադարան

5. Կարտոֆիլի մշակման համար հատկացնել աշնանից խոր հերկած (20—22 սանտիմ.) հողամասեր. գարնանը խաչադիր կատարել 10—12 սանտիմ. խորությամբ կրկնավար, վորից հետո փոցխել՝ կոշտոտ հողերում ափսեավոր, իսկ մնացած տեղերում դիզդզադ փոցխերով։

6. Որգանական պարարտանյութերից (նայած հողամասի դրության) յուրաքանչյուր հեկտարին պետք է տալ գոմաղբ 25—30 տոննա, կամ խառնաղբ (տնային թափթփուկներ, գոմաղբի մոխրի խառնուրդ) 15—20 տոննա, կամ մոխիր՝ 6—8 տոննա։ Այն դեպքում, յերբ տնտեսությունը գործ է ածում հանքային պարարտանյութ, անհրաժեշտ է հեկտարին տալ ազոտային պարարտանյութերից (ցիանամիտ, սելիտրա) 1,5-ից. 2,5 ցենտներ, ֆոսֆորային (սուպերֆոսֆատ) կալիումի և կրային պարարտանյութերից՝ 3—4 ցենտներ։ Թարմ դրությամբ գոմաղբը պետք է տալ աշնանը խոր վար կատարելուց առաջ. կիսափտած կամ փտած վիճակում՝ գարնանը կրկնավարից առաջ։ Հանքային պարարտանյութերից վորոշ տեսակներ (սելիտրա, սուպերֆոսֆատ) պետք է տալ գարնանը փոցխելուց առաջ։

7. Բոլոր տեսակի պարարտանյութերը պետք է պահել անձրևներից, հեղեղումներից ապահով տեղ։

2. ՍԵՐՄԱՑՎԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

1. Սերմացվի համար ոգտագործելիս անհրաժեշտ է պահված սերմացու—կարտոֆիլից ջոկել առողջ, միջին մեծության (50—140 գրամանոց) պալարները, իսկ մնացած կարտոֆիլն ոգտագործել այլ կարիքների համար։

2. Յերբ սերմացուն անկելիս ծլած է, պետք է զգույշ լինել, վոր անկելիս մատաղ ծիլերը չվնասվեն։

3. Արգելվում է աստղաձև—փոշիացող քոսով վարակված կարտոֆիլն իբրև սերմացու ոգտագործել։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Այն դեպքում, յերբ 5 %-ից ավելի չի վարակված, պետք է սերմացուն ախտահանել ֆորմալինի 0,13 տոկոսանոց լուծույթով։ Լուծույթը պատրաստելու համար վերցնել 0,40 %-անոց ֆորմալինից մեկ լիտր լուծել 300 լիտր մաքուր ջրի մեջ, այնուհետև պարկերի մեջ լցրած վարակված սերմացուն 3—5 րոպե պահել լուծույթի մեջ, վորից հետո վորևե ծածկոցով (փալասով, խսիրով) ծածկել 2—3 ժամ և հետո ոգտագործել ցանելու համար։ Խստիվ արգելել ախտահանված սերմացուն սպառման կարիքների համար ոգտագործելը։

4. Նախքան կարտոֆիլ ցանելը սերմացուն պետք է փռել 1—2 որ՝ 20—25 սանտիմ. բարձրությամբ և թառամեցնել։

3. ՏՆԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ.

1. Տվյալ գյուղում կարտոֆիլի ցանքն սկսել գարնանացանի հացահատիկային կուլտուրաների մասսայական ցանքի հետ միասին։ Մոտավոր ժամկետներ—Ախտայի, Աղբաբայի, Աբարանի, Մարտունու, Բայազետի, Փաշալվի և Սիսիանի շրջանների համար՝ ապրիլի 15-ից, Արթիկի, Բասարգեչարի, Գորիսի, Դիլիջանի, Ղարաքիլիսայի, Ստեփանավանի, Լենինականի և Թալինի շրջանների համար՝ ապրիլի մեկից, իսկ մնացած շրջաններում տնկման աշխատանքները պետք է սկսել մարտի 15-ից։

2. Կարտոֆիլի տնկելու խորությունը կախված է ցանելու ժամկետից, պալարի մեծությունից, կլիմայական և հողային պայմաններից, այն է՝ յերբ ցանքը կատարվում է վաղ, գործ են ածվում մանր պալարներ, յերբ հողամասը խոնավ է պետք է տնկել 7—9 սանտիմ. խորությամբ, հակառակը—ուշացած ցանքի խոշոր պալարներ ոգտագործելու դեպքում և չոր պայմաններում խորությունը՝ 10—12 սանտիմ.։

3. Նայած կարտոֆիլի տեսակին, կշռին, հողամասի մեքենայացման հնարավորություններին, սերմացվի նորման պետք է վերցնել հեկտարին 17—22 ցենտ.։ Ցանքը կատարելիս միջշարքային տարածությունը պետք է լինի 60—80 սմ., իսկ հեռավորությունը՝ 40—55 սմ.։

4. Այն տեղերում, վորտեղ կան կարտոֆիլ տնկող մեքենաներ, տնկելու աշխատանքները պետք է կատարել մեքենայով, իսկ մնացած դեպքերում՝ արորով կամ գութանով։

5. Զափազանց խոնավ հողերում կարտոֆիլի ցանքը կատարել ժապավենաձև։

4. ԿԱՐՏՈՖԻԼԻ ԽՆԱՄՔԸ ՅԵՎ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ.

1. Կեղևակալող, կավային ծանր հողերում կարտոֆիլի մատղաշ թփի դուրս գալը հեշտացնելու համար, մինչև ծիլերի յերևալը, 3—5 սմ. խորությամբ զիգզագով 1—2 յերես փոցխել։ այդ աշխատանքը կրկնել, յերբ թուփը 3—5 սանտիմ. բարձրություն ունի։

2. Քաղհանի և փխրացման աշխատանքները կատարել վոչ պակաս յերկու անգամ, առաջինը, յերբ թուփն ունի 10—15 սանտիմ. բարձրություն (մոտավորապես 1—15 մայիսի), յերկրորդ քաղհան-փխրացումը կատարել առաջին քաղհան-փխրացումից 10—12 որ անցնելուց հետո։

3. Բուկ լցնելը կամ վարը դնել, յերբ կարտոֆիլի թուփն ունի 18—20 սանտիմ. բարձրու-

թյուն (մոտավորապես մայիսի 25-ից մինչև հունիսի 10-ը), առաջին բուկը լցնելուց 8—10 որ հետո կատարել լրացում։

4. Մշակության հետ կապված հիմնական աշխատանքները, քաղհան-փխրացումը, բուկը տալ, վար գնել և այլն, պետք է ավարտել մինչև կարտոֆիլի ծաղկումը։

5. Ջրարբի հողամասերում առաջին ջուրը տալ անկելուց մոտավորապես 35—40 որ անց. Ջրելու հետագա աշխատանքները (2—5-րդ) կատարել ըստ պահանջի։ Բերքահավաքից 25—30 որ առաջ դադարեցնել ջրելու աշխատանքը։

6. Սելոս պատրաստելու կամ թուփն իբրև անասունի կեր օգտագործելու համար (յեթե կարտոֆիլի թուփը վարակված չե ֆիտոֆտորայով), հնձել թուփը բերքահավաքից 10—15 որ առաջ։

5. ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

1. Ֆիտոֆտորա (սև փտում) նկատելիս թուփը, հուլիս—օգոստոս ամսում, սրսկել 1,25 տոկոսանոց բորդոյան հեղուկով։ Վերցնել 5 կիլոգրամ պղնձի արջասպ, 6—8 կիլոգրամ կիր և 400 լիտր ջուր, մեկ հեկտարին գործադրել այդ լուծույթից 42—48 դույլ։ Բերքահավաքից 8—10 որ առաջ ամբողջությամբ հեռացնել և այրել վարակված թփերը։

2. Թփի այլ հիվանդություններ (տերևների

կուչ գալ, վաղաժամ դեղնություն) յերևալու դեպքում անմիջապես հավաքել վարակված տերևներն ու ցողունները։

6. ԲԵՐՔԱՀԱՎԱՔԸ ՅԵՎ ԱՄԲԱՐՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ.

1. Բերքահավաքից մեկ ամիս առաջ ավարտել կարտոֆիլի ամբարման համար օգտագործվող պահեստների, ամբարների, նկուղների, ոգանցքների և տարայի վերանորոգման ու ախտահանման աշխատանքները։ Բուրգային պահպանման դեպքում պահվող սերմացվի քանակի 3—5 տոկոսի չափով, նախորոք պատրաստել չոր ծղնոտ։

2. Բերքահավաքի անմիջական աշխատանքներն սկսել այն ժամանակ, յերբ թուփն սկըսում է դեղնել, թառամել և ամրանում է կարտոֆիլի մաշկը։ Լեռնային շրջաններում բերքահավաքի գործնական աշխատանքներն սկսել սեպտեմբերի վերջից մինչև հոկտեմբերի 20-ը, նախալեռնային շրջաններում՝ սեպտեմբերի 20-ից հոկտեմբերի 20-ը։ Մնացած շրջաններում այդ աշխատանքն ավարտել մինչև հոկտեմբերի 15-ը։ Բերքահավաքի տևողությունը պետք է լինի 15—20 որ։

3. Սերմացվի համար նախատեսված ցանքերի բերքահավաքը կատարել մասսայական բերքահավաքի վերջին որերում։

4. Այն տեղերում, որտեղ կան կարտոֆիլ քանդող մեքենաներ, քանդելու աշխատանքը կատարել մեքենայով, իսկ մնացած դեպքերում բահերով, արորով կամ դութանով։

5. Սերմացվի համար առողջ պալարների ընտրությունը ըստ մեծության և գույնի պետք է կատարել հենց դաշտում, բերքահավաքի հետ զուգընթաց, անհրաժեշտության դեպքում, մինչև պահ տալը, կրկնել գյուղում։

6. Համատարած բերքահավաքից հետո, արորի կամ փոցխի միջոցով դաշտում կատարել մնացած պալարների կրկնակի հավաք։

7. Տեղափոխման աշխատանքները կատարել նախորոք պատրաստած և հարմարեցրած տարայով և փոխադրական միջոցներով։ Արգելել կարտոֆիլի տեղափոխման ընթացքում ոգտագործելու մետադյա վերջավորություն ունեցող գործիքներ։

7. ԱՄԲԱՐՈՒՄ.

1. Սերմացվի համար նախատեսված կարտոֆիլն ամբարել առանձին, իսկ սպառման կարիքների համար առանձին։

2. Արգելել կարտոֆիլի պահեստներում, նկուղներում և բուրգերում պահելու գյուղատնտեսական այլ մթերքներ (հացահատիկ, բանջարեղեղեն, արմատապտուղ), շուտ խոնավացող նյութեր (աղ, հանքային պարարտանյութ) և գյուղատնտեսական ինվենտար ու գործիքներ։

3. Մինչ ամբարումն անհրաժեշտ է սերմացուն փռել և ցամաքացնել։

. Սերմացուն ամբարել պահեստներում, մառաններում և գետնափոր բուրգերում։

5. Ամբարումից 5—10 օր առաջ ստուգել և կարգի բերել ունեցած պահեստներն ու նկուղները և ավարտել բուրգերի կառուցումը։

6. Պահեստները, ամբարները և բուրգերը պետք է ապահովել անհրաժեշտ քանակությամբ ոդափոխող խողովակներով։

7. Պահեստները, նկուղները, ինչպես և բուրգերը պետք է ունենան առանձին ջերմաչափեր։ Կարտոֆիլ պահելու վայրերը պետք է ունենան 1—3 աստիճան տաքություն։

8. Ամբարները և բուրգերն ընտրել և կառուցել ստորերկրյա ջրերից ապահով տեղում։ Վերջիններիս շուրջը 30—40 սանտիմ. լայնությամբ և 20—25 սանտիմ. խորությամբ ջրատար առվակներ պատրաստել։

9. Կարտոֆիլի պահպանման ամբողջ ժամանակաշրջանում պարբերաբար ստուգում կատարել։

10. Պահված սերմացվի վիճակը և դրությունը պարզող առանձին տետրեր ունենալ և կանոնավոր գրանցումներ կատարել։

11. Նշանակել կարտոֆիլի ձմրան պահպանման անմիջական պատասխանատու անձնավորություններ թե կոլտնտեսություններում և թե շրջաններում։

ՇԱՔԱՐԻ ՃԱԿՆԴԵՂԻ ՄՇԱԿՄԱՆ ԱԳՐՈԿԱՆՈՆՆԵՐ.

Ի. ՀՈՂԻ ՄՇԱԿՈՒՄԸ ՅԵՎ ՅԱՆՔԸ.

1. Շաքարի ճակնդեղի ամենալավ նախորդները հանդիսանում են լոբազգի բույսերը և միամյա խոտաբույսերը, ընդեղենները, աշնանացանը և ցելերը։

2. Շաքարի ճակնդեղի բարձր բերքն ապահովելու համար ամրան և աշնան հերկն առաջին հերթին պետք է հատկացնել շաքարի ճակնդեղին։

3. Այն կոլտնտեսություններում, որտեղ կիրառված է ցանքաշրջանառությունը, որպես կանոն, ճակնդեղի ցանքը պետք է տեղավորել իր տեղում։

4. Վաղ գարնան դաշտ դուրս գալուն պես աշնանահերկն անմիջապես փոցխել զիդդագ փոցխով յերկու յերես և այդ աշխատանքը վերջացնել յերկու-յերեք որում։

5. Ցանքից առաջ կատարել յերեսվար (կուլտիվացիա) 8—10 սանտիմետր խորությամբ բազմախոփանի գութանով նախորդ հանելով գութանի թերն ու անմիջապես փոցխել։

6. Ճակնդեղի հողի նախացանքային մշակումը և ցանքն սկսել հացահատիկային կուլտուրաների մասսայական ցանքն սկսելուց 3—4 որ հետո և ավարտել 7 բանվորական որում։

7. Հողը պարարտացնել սուպերֆոսֆատով, մեկ հեկտարին տալով 2,5 մինչև 3 ցենտներ։

8. Ցանքը կատարել շարքացան և մեկ հեկտարին ցանել 30 կիլոգրամ սերմ։ Վոչ մի դեպքում չի թույլատրվում ցանքը կատարել առանց սերմ սուրգող լաբորատորիայի սերմի վորակը հաստատող փաստաթղթի։

9. Ցանքի խորությունը սահմանել ծանր հողերում 3 սանտիմետր, իսկ թեթև հողերում 4 սանտիմետրից վոչ պակաս խորությամբ։

2. ՇԱՔԱՐԻ ՃԱԿՆԴԵՂԻ ՄՇԱԿՈՒՄԸ.

1. Շաքարի ճակնդեղի ծիլերն յերևալուն պես, առանց սպասելու լրիվ ծլելուն, անմիջապես շարքերի մեջ կատարել շարովկա (մակերեսային փխրացում) և այդ աշխատանքները վերջացնել 4—5 որում։

2. Շարովկայից անմիջապես հետո, ճակնդեղի յերկու իսկական տերևները յերևալուն պես, կատարել նոսրացում 18 սանտիմետր հե-

ռավորության վրա թողնելով ուժեղ և առողջ բույսեր։ Այս աշխատանքները վերջացնել 10 որում։

3. Նոսրացման աշխատանքները վերջացնելուց հետո կատարել ստուգում և այդ աշխատանքներն ավարտել ութ բանվորական որում։

4. Առաջին ջուրը տալ ստուգումից անմիջապես հետո-հունիսի առաջին տասնորյակում և այդ աշխատանքներն ավարտել 10 որում։ Ջրելուց 3—4 որ հետո շարքերի մեջ կատարել փխրացում և քաղհան։

5. Երկրորդ ջուրը տալ հունիսի վերջին և ավարտել 10 որում։ Ջրելուց 3—4 որից հետո շարքերի մեջ կատարել փխրացում և քաղհան։

6. Երրորդ ջուրն սկսել 2-րդ.ջրից 20—25 որ հետո և ավարտել 10 բանվորական որում։ Ջրելուց 3—4 որ հետո կրկին փխրացում կատարել։

7. Չորրորդ ջուրը, անհրաժեշտության դեպքում, կատարել 3-րդ ջրից 20 որ հետո։ Ճակնդեղի մշակման աշխատանքների ժամանակ լրիվ ոգտագործել ձեռքի պլանետները և ձիու կուլտիվատորները։

3. ԲԵՐՔԱՀԱՎԱՔ

1. Ճակնդեղի բերքահավաքն սկսել հոկտեմբերի սկզբից և ավարտել 15 բանվորական որում։

2. Ճակնդեղի արմատները մաքրել հողից, կտրել արմատի սուր ծայրը, տերևներն արմատից կտրել կոնաձև և առանց մաքրելու մեկ որից ավել չթողնել։

3. Մաքրած ճակնդեղն անմիջապես կույտ դարսել 5—6 ցենտների չափով և ծածկել հողի բարակ շերտով։

4. Ճակնդեղի տեղափոխումն ավարտել հոկտեմբերի 25-ին։

99Ի

Агроправила по обработке картофеля и сахарной свеклы.

Сельхозгиз 1935 Эривань

20717